

տարւյն ժողովուրդը ուզեց այս պատուոյն մաս նակից ըլլալ . որով ուրիշ երկու գանձաւոր հարկ ելաւ աւելցնել : Երկորդ պիւնիկեան պատերազմին ժամանակը գանձաւորաց թիւը ութ ելաւ , ու հետզետէ օրէ օր կ'աւելնայ . ասոնցմէ երկոքը դանչաւորդ + աւաշու անուամբ հռոմ կը կենան : Իրենց էական պաշտօնն է հասարակաց զրամին տեսչութիւնը : Տէրութեան եկամուտը կը հաւաքեն , անոր պիտոյքը կը հոգան , տուգանքը ձեռք կը բերեն , և ելումտից հաշիւը կը բռնին , ուսկից կ'իմացուի իրենց տեսչութեան ուղիղ : Հսկողութիւնը : Իրենց յանձն է դարձեալ հռոմէական Արծուեաց պահպանութիւնը . երբորբանիները արշաւանք մը ետ կը դառնան , Կառնովին տաճարը կը դնեն անոնց նշանները հանդերձ հասարակաց գանձովք , և երբ նորէն բանակը պատերազմի երթալու ձեռք զարոնէ՝ զանոնք դարձեալ զօրավարաց կը յանձնեն : Նոյնպէս Քառակի դանչաւորաց պաշտօնն է գեսպանաց բնակարանը հոգալ , անոնց պիտոյքին խնամք տանիլ , և յանուն հասարակապետութեան գեսպանաց որոշուած ընծաները անոնց յանձնել :

Կը շարունակոի :

### Հեռագրական նորալոր մը :

Երբ աղլանդական հեռագրին պահնը , օր կը կապէր ուղղակի զլուգդիամերիկոյ հետ , հաստատուեցաւ ու լուրջ մատրայի մէջ ծանուցուեցաւ . քանի ը օր ետքը լորտերուն խորհրդարանին ուշակաւոր անդամներէն մէկը հեռարական նորահաստատ պաշտօնարանը երկայցաւ .

— “Պարոն , ըստաւ պաշտօնատէրին , ուզեմ հեռագրական լուր մը զրկել ՚ի Ա. Յովհաննէս Ար-Երկրի :

— Տէր իմ , անշուշտ չէք գիտեր որ եռ ամենայն ինչ բարեկարգուած չէ :

— Դիմուես իմ ովկ ըլլալս . ադլանական հեռագրական ընկերութեան ասն հազար բաժանորդութիւն ուն ես . ահա քեզի երկու հարիւր ուղիւն (5000 ֆր.) , խնդրեմ կատար ինչ որ քեզի ըսեմ :

— Տէր իմ , պատասխանեց պաշտօնատէրն յարգութեամբ , պիտի գիտնաքամէն մէկ բառը վայրկեան մը կ'ուզէ սսնելու , հետեւարար հարցմանդ պա-

տասխանը դրկենէս ետև երկուքուկէս ժամէն առաջ չենք կրնար ընդունիլ :

— Կը սպասեմ :

— Հրամանեցէք , ըսեք ձեր հեռագրական լուրը :

“ Լ ոնտրա , երեկոյեան ժամ 5 .

“ Խյաւրեցէք ինծի ամենէն զօրաւոր կայծն որ ձեր գործիներովը կրնաք գոյացունել , միայն վայրկեան մը առաջ ինծի իմաց տուէք , ” :

“ Աստաւ ու սպասեց ամենայն համբերութեամբ :

“ Խամը եօթնին ու քառասունը հինգ վայրկենին , օր է ըսել , հեռագրական լուրը զրկելէն երկու ժամ ու կէս վերջը , հեռագիրը կը պատասխանէր .

“ Ո . Հովհաննէս Ար-Երկրի .

“ Ո այրկենէ մը կ'ընդունիք ձեր խընդիրած կայծը , ” :

“ Ա . Ա . լորտը ծոցէն տուփ մը հանեց ու մէջէն՝ Իլլանայի սէկար մը առնելով կտոր մը արեթ ելեքտրական թելին վրայ բռնեց , օր մէկէն բռնկեցաւ , և անով սէկար վառեց ու ծանրութեամբ մը ծխելով արագուարանէն դուրս ելաւ :

“ Իւս կիսագնտէն այս կերպով կրակ ուզելու լուրը հազիւ թէ տարածուեցաւ անգիտացի ազնուականաց մէջ , ամէնքը ուզեցին բերել տալ այս կրակը , որով պաշտօնարանը խել մը օր բազմութեամբ լցուած էր , որոնք կու գային սէկարնին վառելու 5,000 ֆրանքով . Աւանիկէ ետքն ալ շատ ծխախոտ ծախողներն իրենց խանութին կանթեզներուն ապակիներուն չորս կողմը գրած ունէին ” Ար-Երկրէն եկած հոր , ” :

### Վերջին աշխարհահամար Գաղղիոյ :

Ինչպէս օր սովորութիւն է , ամէն հինգ տարին մէյմը բովանդակ Գաղղիա աշխարհահամար կ'ըլլուի . 1861 տարին այս հնգամեայ շրջանին վերջինն ըլլալով , ներկայ տարւոյս առաջին օրը հրատարակուեցաւ նոր աշխարհահա-

մարզ, որուն մէջ զգալի կերպով բազմացած կը տեսնուի Դաղղիս բնակչաց թիւը: Լախընթաց աշխարհահամարն, որ 1856 տարւոյն եղաւ, Դաղղիս ուներ 86 գաւառ և 36,039,364 բնակիչ: իսկ 1 յունուարի 1862 ամին, Դաղղիս ունի 89 գաւառ և 37,382,225 բնակիչ: ըսել է թէ 1857 տարիէն ինչուան 1861 տարւուան հնգամեայ շրջանին ժամանակ Դաղղիս աճեր է 1,342,861 կամ 3·72 առ ։ բնակչօք: Լյութիւն հանելով նոր գաւառաց բնակիչքն, որ են 669,059 ոգիք, հին գաւառաց բնակչաց աճումը կ'ըլլայ 673,802 ոգիք կամ 1·86 առ ։

Լախընթաց հնգամեայ երկու շրջանաց մէջ այս աճումն աւելի նուազ էր: ինչպէս 1846 տարիէն ինչուան 1851, աճումն էր 382,684 ոգիք, կամ 1·08 առ ։ և 1851 տարիէն մինչև 1856, աճումն էր քիչ մը նուազ քան զվերագոյն թիւը: իսկ 1861 տարւոյն աշխարհահամարը գրեթէ կրկին աճումն կու տայ:

Լյութանիս պատճառը դիւրին է ըմբռնել, վասն զի նախընթաց շրջանին ժամանակը շատ մը ձախող պարագաներ վրայ եկան, ինչպէս էին գլխաւորապէս հնծոց անբաւականութիւնն ու փոխադրական հիւանդութիւններն: Հասարակաց զարգացմանը բարօրութեան ազդեցութեամբն երկրի մը բնակիչքը կանոնաւոր կերպով կը սկըսին աճել:

Ոինչ 1851 տարիէն ինչուան 1856, միայն 32 գաւառք յաճման էին. 1861 տարին 57 գաւառք յաճման են, և 29 գաւառք՝ ի նուազման, ուր 1856 տարին 54 գաւառք էին՝ ի նուազման:

Լյութեան Դաղղիս քաղաքական վիճակը կը բաժնուի 89 գաւառ<sup>1</sup>, 373 գեհք<sup>2</sup>, 2,938 վիճակ<sup>3</sup> և 37,510 շինավայրք<sup>4</sup>. որոնց բնակչաց գումարն է 37,382,225 ոգիք. իսկ Լյութիրի կը բաժնուի երեք գաւառ, և ունի 2,677,973

բնակիչ: Որով կ'ըլլայ Դաղղիս և Վ. Ճերի ընդ ամէնը 40,060,198 բնակիչ: Վայնացմէ իբր 1,500,000 բողոքականք են, 100,000 Նորէայք, Վ. Ճերի 2,470,000 մահմէտականք, մնացածը հառլէմական կաթուղիկեայք:

Դաղղիս բնակիչքը դաս դաս բաժնելով. են արուք՝ 18,642,504, էպէ 18,739,724: Վ. մուրիք. արուք՝ 10,210,756. էպէ՝ 9,487,541: Վ. մումացեաք. արք՝ 7,503,024, կանայք՝ 7,457,125: Վ. յրիք. արք՝ 928,724. կանայք՝ 1,795,065:

### Նոր տեսակ կենդանի մը:

Դամանակաւ երբ հասարակ չէր եղած ուամիկ ժողովրդեան մէջ ժամացուցի գործածութիւնը, շատ տեղչէին գիտեր անոր ինչ ըլլալը. օր մը մէկ աղքատ և տիմար գեղջուկ մը երբոր հօտը արածելու կը տանէր, ճամբան մէկ ոսկի ժամացոյց մը կը գտնէ, որ ձիւարի մը ծոցէն ընկեր էր քիչ մը առաջ, երբ յոգնած դադրած իջեր ծառի մը շուքին տակ հանգչեր էր, և յետոյ առանց ուշադրութեան ելել շարունակեր էր նամբան: Հովիւր ոչ երբեք ժամացոյց տեսեր էր՝ զարմացմանմբ գոչեց. — Ո՞չ, ինչ կրնաց ասիկայ որ ինքնիրեն կը խըտի, և կարծես թէ շունչ կ'առնու. — ականջին կը մերձեցընէ զայն, ու կ'ըսէ. — Հոս ալ տարակոյս չկայ. ասոր մէջ պէտք է որ կենդանի մը ըլլայ. և որչափ ալ ասդին անդին դարձընեմ ու կրկին կրկին գիտեմ զայն, այնչափ միտքս կը հաստատուի որ ասիկայ հաւկիթ մը ըլլայ. չըլլայ թէ մէկալ օր տեսնուած մեծ թռչունը, որ մեր կողմերն անծանոթ էր, ածած ըլլայ այս հաւկիթ ասկէ անցնելու ժամանակը: — Ուստի բնութեան այս նորուսը բոլորովին իորդ ընկղմած իր նորագիւտ մնածութեան ցը, առանց կարող ըլլալու որոշել թէ

1. գ.լ. Département.
2. գ.լ. Arrondissement.
3. գ.լ. Canton.
4. գ.լ. Commune.